18. ԹԱՔԱՎԸԵՐԵՆ ՏՂԵՆ ՆԱՆ ՔԸՉԱԼԵՆ ՆԱՂԼԸ

Մին թաքավըրըրու տղու խոխեքյն ասում ըն՝ հա̈ր չօննա։ Տա քյինա̈մ ա ծöրա̈ն տատեն կօշտը, հըրցընում, տատը թա՝ քու հա̈ր էսհինչ իրգյիրումն ա։ Տղան կօղի կուճօւր, շատ ղուվաթավ ա ինöւմ, վըեր քարեն հօփ տար, ճöւր տöւս կըքըցա̈ր. ասում ա.— Ծիս, մինգյել զենքերըս ինձ տուվեքյ, ժյինա̈մ ըմ հօրըս շօռ կյամ, քթենա̈մ։ Ծին յիհա̈րöւմ ա, զենքերը կապում, քըթեն թուշավը հըղե ինöւմ, քյինա̈մ, վըեր հօրը շօռ կյա̈։ Շատ ա քյինամ, թա խրեգյ, մին քչալու վա պըտահում, հըրցնում, թա հիշտե՞ղ կա խմելի ճöւր։ Քաչալը թա՝ ըստեղաս մօտե ճիրավըեր կա, պիտի քյա̈նգիրը մինան կապենքյ, նի մըննե վիգըրա̈վը տöւս օնե։

Քաչալը թաքավըրիրեն տղեն քյինգիրավ կապում ա, վեղըրա̈ն տինöւմ ծեռքեն, վըեր նի մըննե ճöւր տöւս օնե։ Հենց վըեր տա հանում ա ճիրըվըերեն տակը, քաչալն օղում ա, վըեր տöւս չօնե, թօղե ճիրըվըերումը, ծին յոր օնե, քշի քյինա̈։ Թաքավըրերեն տղան ղաչանք ա անում, թա վըեր տöւս օնես, ծին քեզ ըմ տըլական։ Քաչալը տըրան տöւս ա օնում, ծին նստում, քյինա̈մ մին հեռու տեղ շօրերը փօխում, հըղե ինöւմ թաքավըրերեն կօշտը, ասում, թա՝ ես ըմ տղատ։ Իսկ թաքավըրերեն տղան տրան հըղեննի պտահում ա, տռաչ ճինա̈նչöւմ չի, եռնան, վըեր բիրա̈գի քյինա̈մ ըն թաքավըրերեն կօշտը, էտ քաչալը թաքավըրերեն վըեր ասում ա ես ըմ տղատ, տա ամեն հինչ կլ՞ըխ ա ինգյöւմ, բայց սուս ա անում։

Էտ վախտը Թաքավըրըն ո̈իրա̈ն մոտի մարԹուցը հըվաքում ա, Թա էնհինչ ծուվեն ղրաղեն մին հո̈իրի-փա̈րի ախճիգյ կա, քյինա̈լ պիտիքյ հինչ ջուտա օղում ա ինի, պիրիքյ։ Վըեչ մինը ոխակ չի անում, էտ տղան Թա՝ ես կըքյինա̈մ։ Տրան զորք, ծի յըն տամ, զենքերն էլ ն հետը։ Եր ա ինո̈ւմ ծին, զորքավը քյինա̈մ, վըեր էտ ըխճըկանը պիրի։ Շատ ըն քյինա̈մ, Թա խըեգյ, վըեր հըսնում ըն մին կըրմունջու, տեսնում ըն մըրչըմննեն քյարվան կապած կըմունջավն անց ըն կենում։ Զորքն օղում ա Թա կոխ տա-քյինա, տա Թողում չի։ Զորքը վըեննն ա կըցընում, ասում.— Տահանք էլ ըն ըստուծեն ըստեղծածը, Թողեքյ քյինան ապրեն։ Մըրչըմնիներեն քյարվանը վըեր անց ա կենում-պըրծընում, զորքն օղում ա Թա կարմունջն անց կենա։ Էտ վախտը մըրչըմններեն քըմակի Թորունան մին ո̈ւս ա կյամ, Թա հարկավըեր ընք կյիա̈նկան։

Մին խիլլա վըեր քյինա̈մ ըն, տեսնում ըն մին յուղունեգյու ճոտ հըղըցումը վըեր ինգյա̈ծ։ Օղում ըն Թա կոխ տան-անց կենան, տա Թողում չի, յուղունեգյին ճոտը յոր ա օնում, ծեռքան Թող անում, Թըռչըցնում։ Թըռչըցնելիս մարը կյամ ա, Թեերը Թափ տալավ, ո̈ւս ընելավ, ճոտեն կըլխավն անց կենում, ճոտը Թա՝ մամմա, մամմա, սա յա ինձ ըղադալ։

Զորքն էլ ա քյինա̈մ, հանում ծուվեն ղրաղը, տեսնում մին ծո̈իկուն ցըմաքումը վըեր ինգյա̈ծ, օշը տարած, օղում ա Թա լիհա̈ ըստակի։ Օղում ըն, Թա կոխ տան անց կենան, տա Թողում չի. յոր ա օնում, Թող անում քցո̈ւմ ճո̈ւրը։

Խիլլա յել վըեր քյինա̈մ ըն, հանում ըն Թաքավըերեն ըխճըկանը պալատը։ Ախճիգյը Թաքավըերեն տղեն ասում ա.—Իրեք պայման ըմ տինո̈ւմ ըռաչիտ։ Թա վըեր կըրեցեր կադարես, կյամ ըմ քեզ, Թա չէ՝ չէ՛։ Առաչ մին շուվալ ցորեն, մինգյել մին շուվալ կորեկ ո̈իրո̈իր ն հետ խառնում ա, ասում.—Պիտի ճոկես, ամեքյա ո̈իրա̈նց շուվալն ածես լըցնես, ցորենեն շուվալը մին ղրաղեն տինես, կորկենը՝ էն մին ղրաղեն։ Տղան մտածում ա, Թա հինչ անե, քչերեն կեսումը մըրչըմններեն քյարվանը կյամ ա ճոկում, տինո̈ւմ ղրաղ, քյինա̈մ։

Եռնան ախճիգյը մին մեյդ ա պո̈ւրո̈ւմ, մաչան շախկա տամ, կուտուր-կուտուր անում, Թա պիտի ո̈իրո̈իր անես, սըղըցընես, քըըրհանա յել կյամ, տեսնամ կոխկեն նստած, քըղնըհետ գըո̈ւց ընելիս։ Տղան պո̈ւրո̈ւմ ա էն մեյդին կտուրտանքերն ուրուր անում, աչկերը տինո̈ւմ ուրանց տեղերը, տեսնում ճոխտն էլ շիլ-

դի յըն։ Էն յուղունեգյը, վըեր ծիրան ճոտեն էտ տղան ըղաղալ ա, կյամ ա, ասում.—Աչկերը փոխե, թեփուսա մինը պուկե, քսի աչկերը, սըղըննական ա։ Տղան տի յել անում ա։ Քշըրհանան ախճիգյը կյամ ա, տեսնում մեյզը նստած, տըրա նհետ ղրուց ընելիս։ Ախճիգյը տղեն հըցնում ա, թա՝ դոնղն աստ, ինձ քըղետ յը՞ս օղում տանես, թա չէ։ Տղան թա՝ ինձետ յըմ օղում տանեմ։ Ախճիգյը հըվատում չի։

Էքյսի օրը ախճիգյը մին մուտանա յա պծ̈իրծ̈ում, քցում ծովը, տղեն թա տծ̈ւս պիտի օնես։ Տղան ծուվեն ղըաղեն մենակ վըեննը կացած, մտածում ա, թա հինչ պիտի անե, բծ̈իրդան էն ծծ̈իկունը մուտանան կծած, պծ̈իրծ̈ում ա տամ ծ̈իրան։

Տղան ըխճըկանը յոր ա օնում, քյինմ հորը կոչտը, տեսնում էն մարթին քցած մին ճոկ օթաղ, եշում ըն, վըեր ինքյը կյա։ Տըեղ հծ̈րն ասում ա.—Մտկըրններումըս տպված ա իլծ̈լ, վըեր սա մըեր տղան չի։ Տղան ըսկըսում ա կըլխավն անցկացածը նաղլ անելը։ Տըեղ կըլ՞խ ըն ինգյծ̈ւմ, վըեր թաքավըրերեն տղան հենց տա յա։ Պծ̈իրծ̈ում ըն էտ քըչալեն ծիյին քըմական կապում, քաշ-քաշ անում, ըսպանում, տղեն էլ ըխճըկանը նհետ փսակում։